



Atarbekyan str. 82, 3104 - Gyumri (Armenia), Tel. (+374312)52115, Fax. (+374312)56959, E-mail: armorda@web.am
Tbilissian Avenue, side street 1/3, Kanaker - Yerevan (Armenia), Tel. (+374)10280577, Fax. (+374)10288193

«Ոչ միայն արդար՛ մտանեն ի դուռն Տեառն. այլ եւ մեղաւորք խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ արդարացեալ մտանեն ընդ սա»
(Կարգ դոնրացէքի):

Յո՛յժ սիրելի

Ծայրագոյն վարդապետներ, վարդապետներ, քահանաներ, սարկաւազներ, մայրապետներ եւ հաւատացեալ ժողովուրդ,

Տեղեակ էք, որ Ֆրանչիսկոս Սրբազան Քահանայապետը հռչակել է «Ողորմութեան Սուրբ Տարի», որ սկսուում է 2015 թ. դեկտեմբերի 8-ին եւ կտեւի մինչեւ 20 նոյեմբեր 2016 թ.: Յորելենական Տարին Սրբազան Քահանայապետը հռչակեց՝ նշելու համար Վատիկանի Բ Տիեզերածոզովի փակման 50-րդ տարեդարձը:

Դեկտեմբերի 8-ին «Ողորմութեան Սուրբ Տարուայ» առիթով Սրբազան Քահանայապետի ձեռամբ կկայանա Հռոմի Սուրբ Պետրոս Մայր Տաճարի «Սուրբ Դոան» բացման արարողութիւնը, որին կյաջորդի Հռոմ քաղաքի միւս երեք Աւագ Տաճարաների «Սուրբ Դոաների» բացումը:

Սրբազան Քահանայապետի օրհնութեամբ եւ տնօրինումով, իւրաքանչիւր թեմակալ Առաջնորդի վիճակվում է կազմակերպել թեմի եկեղեցիներում համապատասխան արարողութիւնը՝ խորհրդանշական «Սուրբ Դոան» բացման:

Ուստի, յո՛յժ սիրելի հոգեւոր դաս եւ հաւատացեալ ժողովուրդ, խնդրում եւ քաջալերում ենք ձեզ, որ սոյն թուականի դեկտեմբերի 9-ին Աստուածամօր Անարատ Յղութեան Տօնի Զայնաւոր Պատարագից առաջ մասնակցեք Յորելենական «Ողորմութեան Սուրբ Տարուայ» բացմանը: Արարողութիւնը կատարուելու է մեր Գիւմրիի Աթոռանիստ Սրբոց Նահատակաց եկեղեցում: Ինչպես նաեւ բոլոր հաւատացեալները հնարավորութիւն կունենան օգտուելու այս շնորհիքի աղբիւրից: Կարելիութիւն ենք տալիս նաեւ խորհրդանշական «Սուրբ Դոան» բացում կատարել Երեւանի մեր Սուրբ Գրիգոր Նարեկացու անուան ժողովրդապետութեան մէջ: Հորդորում ենք մեր համայնքի



Atarbekyan str. 82, 3104 - Gyumri (Armenia), Tel. (+374312)52115, Fax. (+374312)56959, E-mail: armorda@web.am
Tbilissian Avenue, side street 1/3, Kanaker - Yerevan (Armenia), Tel. (+374)10280577, Fax. (+374)10288193

գաւակներին, որ տարուայ ընթացքում իրեն ուխտաւորներ այցելեն այս եկեղեցիներից մեկը՝ այդպիսով անմասն չմնալով «Լիակատար Ներողութիւն» շահելու հնարաւորութիւնից:

Միաժին Որդու՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով Աստծոյ որդի դառնալ՝ նշանակում է նմանուել Հօրը, ողորմութեան ու գթութեան Աստծուն: Ողորմութիւնը շնորհի՝ սիրուց բխող արարմունք է, եւ, Արարչից գատ, ողորմութեամբ կարող է սոգորուել մարդը, այսինքն՝ շողալ ֆրիստոնէական առաքինութեամբ:

Քրիստոսի Յարութեան պտուղը հասունանում է կեանքի ծառի վրայ՝ Խաչի, երբ ամենքս, առած մեր խաչը, ֆայլում ենք Իր յետեւից՝ հեռու չարամտութիւնից, ատելութիւնից, ֆինախնդիր ոգուց: Աստուածային ողորմութիւնը եւ գթութիւնը ճաշակած ֆրիստոնէան հեռու է այս ամենից: Զղջումով եւ ապաշխարհութեամբ, այսինքն՝ ստանալով Ապաշխարութեան եւ Ս. Հաղորդութեան խորհուրդներն ու խորհրդանշական «Սուրբ Դոնից» անցնելով՝ հավատացեալները կստանան լիակատար ներողութիւն եւ իրենց գործնական կյաքնում կապրեն ֆրիստոնէայի՝ երկնքի արքայութիւնը ժառանգած աստուածորդու պատկերով եւ բարոյականութեամբ՝ համաձայն Տէրունական Խօսքի. «Երանի՛ ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմութիւն պիտի գտնեն» (Մատթ. 5.7):

Ք Հ. ՌԱՓԱՅԷԼ ԱՐՔԵՊՍ. ՄԻՆԱՍԵԱՆ
Առաջնորդ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ
Արեւելեան Եւրոպայի Կաթողիկէ Հայոց